ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 05.06.2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 506-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Դավիթ Վարդիկյանի, խորհրդի անդամներ՝ Թամարա Բաղդասարյանի, Լիլիթ Ղազանչյանի, Ռուբեն Հակոբյանի, Դավիթ Մելքոնյանի, Ռոման Ահարոնյանի, Արսեն Հարությունյանի, Պավել Գյուլումյանի և Ցոլակ Մարգարյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով քաղաքացի Սևակ Մելիքյանի բողոքը (մուտք՝ 18.06.2026թ. №1617-26) Պալատի նախագահի 05.06.2026 թվականի թիվ 506-Ա որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Սևակ Մելիքյանը **(այսուհետև նաև՝ Բողոքաբեր)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև նաև՝ Պալատ)**՝ հայտնել է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննվում է թիվ ԵԴ2/11281/02/25 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «Նորք-Մարաշ» ԲԿ-ի և այլոց ընդդեմ «Սոուշըլ Մեդիա» ՍՊԸ-ի: Նշված քաղաքացիական գործով հայցվոր կողմի ներկայացուցիչն է փաստաբան Կարեն Տոնոյանը **(այսուհետև նաև՝ Փաստաբան):**

Դիմողի պնդմամբ՝ մինչև դատական վեճի ծագումը նա մինչդատական պահանջագրի միջոցով դիմել է «Նորք-Մարաշ» ԲԿ-ին՝ իր մոր մահվան դեպքի և դրա հետևանքով առաջացած գույքային ու ոչ գույքային պահանջների կապակցությամբ: Ըստ Դիմողի՝ նշված պահանջագիրը պարունակել է իր անձնական, ընտանեկան կյանքին վերաբերող տվյալներ, բժշկական ծախսերի վերադարձի պահանջներ, ինչպես նաև մասնավոր կյանքի, նամակագրության և բժշկական գաղտնիքի պաշտպանության ներքո գտնվող տեղեկություններ:

Դիմողը հայտնել է, որ 2026 թվականի ապրիլի 21-ին «Ինֆորմացիայի ազգային կենտրոն» ՀԿ-ի և Տեղեկատվական վեճերի խորհրդի կողմից հրապարակվել է թիվ 125 փորձագիտական կարծիքը, որից իրեն պարզ է դարձել, որ իր անձնական տվյալները պարունակող պահանջագիրը փաստաբան Կարեն Տոնոյանի կողմից փոխանցվել է երրորդ անձանց:

Նշվածի հիման վրա Դիմողը խնդրել է փաստաբան Կարեն Տոնոյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և նրան ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Կարեն Տոնոյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն:

Փաստաբանն իր բացատրությամբ հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ-ում մահացել է Սևակ Մելիքյանի մայրը, ինչից հետո վերջինս պահանջագիր է ներկայացրել ԲԿ-ին՝ պահանջելով լուծել ԲԿ-ի մի շարք բժիշկների աշխատանքային պայմանագրերը, վերադարձնել հետազոտությունների և վիրահատության համար վճարված գումարները, փոխհատուցել թաղման ծախսերը և բարոյական վնասը:

Փաստաբանի բացատրությամբ՝ Դիմողը, ստանալով մերժում, իրեն առնչվող կայքով հրապարակումներ է կատարել ԲԿ-ի և բժիշկների վերաբերյալ, ինչի կապակցությամբ «Նորք-Մարաշ» ԲԿ-ն և բժիշկները հայցադիմում են ներկայացրել դատարան ընդդեմ «Սոուշըլ Մեդիա» ՍՊԸ-ի՝ զրպարտություն համարվող տեղեկությունները հերքելու և ոչ նյութական վնասի հատուցման պահանջով:

Փաստաբանը հայտնել է, որ նշված քաղաքացիական գործով հանդիսանում է հայցվորների ներկայացուցիչը, իսկ Տեղեկատվական վեճերի խորհրդին դիմելը պայմանավորված է եղել դատարանում քննվող գործով վստահորդների շահերի պաշտպանությամբ, մասնավորապես՝ գործի համար նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ մասնագիտական կարծիք ստանալու անհրաժեշտությամբ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը 05.06.2026 թվականի թիվ 506-Ա որոշմամբ **(այսուհետև նաև՝ Որոշում)** փաստաբան Կարեն Տոնոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել է՝ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առերևույթ բացակայության պատճառաբանությամբ:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի նախագահի</u>** <u>05.06.2026</u> **<u>թվականի թիվ</u>** <u>506-</u>**<u>Ա որոշման էությունը</u>**<u>.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը 05.06.2026 թվականի թիվ 506-Ա որոշմամբ մերժել է Սևակ Մելիքյանի դիմումի հիման վրա փաստաբան Կարեն Տոնոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը՝ փաստաբանին կարգապահական

պատասխանատվության ենթարկելու հիմքերի առերևույթ բացակայության պատճառաբանությամբ:

Պալատի նախագահի որոշմամբ արձանագրվել է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար միայն դիմումի առկայությունը բավարար չէ: Անհրաժեշտ է, որ ներկայացված փաստական հանգամանքները առերևույթ վկայեն փաստաբանի կողմից «Փաստաբանության մասին» օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կոնկրետ պահանջի հնարավոր խախտման մասին:

Պալատի նախագահը գտել է, որ Դիմողի ներկայացրած հանգամանքները վերաբերում են ոչ թե Փաստաբանի և Դիմողի միջև իրավաբանական օգնության հարաբերություններին, այլ Փաստաբանի կողմից իր վստահորդների՝ «Նորք-Մարաշ» ԲԿ-ի և բժիշկների շահերի պաշտպանության շրջանակում իրականացված գործողություններին:

Պալատի նախագահի որոշմամբ ընդգծվել է նաև, որ անձնական տվյալների, բժշկական գաղտնիքի, նամակագրության գաղտնիության կամ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ենթադրյալ խախտման հարցերը, որպես այդպիսին, կարգավորվում են համապատասխան ոլորտային օրենսդրությամբ և կարող են գնահատման առարկա դառնալ այդ ոլորտում նախատեսված իրավական ընթացակարգերով: Այդպիսի պնդումները ինքնին չեն առաջացնում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմք, եթե դրանք միաժամանակ առերևույթ չեն վկայում փաստաբանական գործունեության **<u>հատուկ կանոնի</u>** խախտման մասին:

Պալատի նախագահը հաշվի է առել նաև, որ Դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրությամբ պարզվել է՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում առկա է թիվ ԵԴ2/5525/02/26 քաղաքացիական գործը, որով Սևակ Մելիքյանը հայց է ներկայացրել ընդդեմ Կարեն Տոնոյանի և «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի՝ պահանջելով ճանաչել իր մասնավոր կյանքի անձեռնմխելիության, նամակագրության գաղտնիության, անձնական տվյալների և բժշկական գաղտնիքի պաշտպանության իրավունքների դիտավորյալ և ապօրինի խախտման փաստը, ինչպես նաև բռնագանձել ոչ նյութական վնասի հատուցում:

Միաժամանակ, Պալատի նախագահը գտել է, որ ներկայացված նյութերով հստակ չի բացահայտվում Փաստաբանին վերագրվող հրապարակման փաստը, մասնավորապես՝ չի ներկայացվել որևէ տվյալ, թե Փաստաբանը երբ, որտեղ, ինչ եղանակով և ինչ ծավալով է հրապարակել Դիմողի պահանջագիրը կամ դրանում առկա տեղեկությունները:

Պալատի նախագահը նաև արձանագրել է, որ պետք է տարբերակել տեղեկության հրապարակումը և գործին առնչվող նյութի տրամադրումը մասնագիտական կարծիք ստանալու նպատակով: Սույն դեպքում Փաստաբանին վերագրվող գործողությունը,

ներկայացված նյութերի շրջանակում, սահմանափակվել է վստահորդների շահերի պաշտպանության նպատակով Տեղեկատվական վեճերի խորհրդին դիմելով:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ 18.06.2026 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև նաև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք՝ խնդրելով վերացնել Որոշումը և փաստաբան Կարեն Տոնոյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Բողոքաբերը, ըստ էության, կրկնել է դիմումով ներկայացված դիրքորոշումը՝ պնդելով, որ Փաստաբանը «Նորք-Մարաշ» ԲԿ-ին հասցեագրված պահանջագիրը, որը պարունակել է իր անձնական տվյալները, բժշկական գաղտնիք և մասնավոր կյանքին վերաբերող տեղեկություններ, առանց իր համաձայնության փոխանցել է երրորդ անձանց՝ Տեղեկատվական վեճերի խորհրդին:

Բողոքաբերը նշել է, որ Տեղեկատվական վեճերի խորհուրդը չի հանդիսանում դատարանի կողմից նշանակված փորձագետ, փորձագիտական հաստատություն կամ դատավարական կարգավիճակ ունեցող սուբյեկտ, ուստի Փաստաբանը իրավունք չուներ Դիմողի անձնական և գաղտնի տվյալներ պարունակող փաստաթուղթը փոխանցել այդ կառույցին:

Բողոքաբերը չի համաձայնել Պալատի նախագահի որոշման այն պատճառաբանության հետ, որը վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածին և գործին առնչվող հարցերի վերաբերյալ մասնագիտական կարծիք ստանալու հնարավորությանը՝ պնդելով, որ Տեղեկատվական վեճերի խորհուրդը չի կարող նույնացվել գործին մասնակցող անձի ներկայացրած փորձագետի կամ դատավարական կարգավիճակ ունեցող մասնագետի հետ:

Բողոքաբերը պնդել է նաև, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի անդամներից Արա Ղազարյանը և Փաստաբանը աշխատում են նույն փաստաբանական գրասենյակում, ուստի, ըստ Բողոքաբերի, տվյալների փոխանցումը տեղի է ունեցել փոխկապակցված անձանց միջև՝ Փաստաբանի վստահորդների շահերից բխող արհեստական և վարկաբեկող կարծիք ձևավորելու նպատակով:

Բողոքաբերը նշել է նաև, որ ժամանակագրական առումով Փաստաբանը Տեղեկատվական վեճերի խորհրդին նյութերը տրամադրել է ավելի վաղ, քան թիվ ԵԴ2/11281/02/25 քաղաքացիական գործով հրապարակվել է վերաքննիչ դատարանի որոշումը, հետևաբար, ըստ Բողոքաբերի, այդ պահին իր տվյալները չէին կարող համարվել դատական ակտով հրապարակված կամ հանրային հասանելի տեղեկություններ:

4. **Փաստաբանի համառոտ դիրքորոշումը**.

Ի պատասխան Սևակ Մելիքյանի բողոքի՝ փաստաբան Կարեն Տոնոյանը ներկայացրել է գրավոր պատասխան՝ հայտնելով, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Փաստաբանը նշել է, որ գործի նախապատմությունը կապված է «Նորք-Մարաշ» ԲԿ-ում Սևակ Մելիքյանի մոր մահվան դեպքի հետ, որից հետո վերջինս պահանջագիր է ներկայացրել ԲԿ-ին՝ պահանջելով, ի թիվս այլնի, լուծել մի շարք բժիշկների աշխատանքային պայմանագրերը, հրապարակային ընդունել, որ մահը վրա է հասել բժիշկների գործողությունների հետևանքով, վերադարձնել հետազոտությունների և վիրահատության համար կատարված վճարները, հատուցել թաղման ծախսերը և վճարել բարոյական վնասի հատուցում:

Փաստաբանի դիրքորոշմամբ՝ «Նորք-Մարաշ» ԲԿ-ի կողմից պահանջագիրը մերժվելուց հետո Սևակ Մելիքյանին պատկանող կամ նրան առնչվող լրատվական հարթակում սկսվել են ԲԿ-ի և բժիշկների վերաբերյալ արատավորող տեղեկությունների հրապարակումներ, որոնցից պաշտպանվելու նպատակով «Նորք-Մարաշ» ԲԿ-ն և բժիշկները հայց են ներկայացրել դատարան ընդդեմ «Սոուշըլ Մեդիա» ՍՊԸ-ի՝ զրպարտություն համարվող տեղեկությունները հերքելու և ոչ նյութական վնասի հատուցման պահանջներով: Նշված քաղաքացիական գործով ինքը հանդիսանում է հայցվորների ներկայացուցիչը:

Փաստաբանը հայտնել է, որ դատարանի կողմից ապացուցման բեռի բաշխման արդյունքում հայցվորների վրա դրվել է, ի թիվս այլնի, փաստացի տվյալներ ներկայացնելու և այդ տվյալներով հայցվորների պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորելու հանգամանքը ապացուցելու պարտականություն: Այդ պարտականությունը կատարելու և իր վստահորդների շահերը պաշտպանելու նպատակով ինքը դիմել է Տեղեկատվական վեճերի խորհրդին՝ գործին առնչվող հարցերի վերաբերյալ մասնագիտական կարծիք ստանալու համար:

Փաստաբանի պնդմամբ՝ Տեղեկատվական վեճերի խորհուրդը զրպարտությանը, վիրավորանքին, մասնավոր կյանքի պաշտպանությանը և տեղեկատվության ազատությանը վերաբերող հարցերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացություններ տրամադրող կառույց է, որի կարծիքները նախկինում ևս ներկայացվել են տարբեր դատական գործերի շրջանակներում: Ըստ Փաստաբանի՝ ՏՎԽ-ին դիմելը նպատակ է ունեցել ձեռք բերել մասնագիտական կարծիք՝ դատարանում իր վստահորդների դիրքորոշումը հիմնավորելու համար, և չի կարող ինքնին դիտվել որպես անձնական տվյալների կամ նամակագրության գաղտնիության խախտում:

Փաստաբանը հայտնել է նաև, որ «Մինչդատական պահանջագիր» վերտառությամբ փաստաթուղթը հասցեագրված է եղել իր վստահորդին՝ «Նորք-Մարաշ» ԲԿ-ին, և իր

բնույթով ներկայացնում է վնասի հատուցման պահանջ: Փաստաբանի պնդմամբ՝ այդ փաստաթուղթը չի պարունակել բժշկական գաղտնիք կամ այնպիսի անձնական տվյալներ, որոնց օգտագործումը վստահորդի պաշտպանության շրջանակում կարող էր դիտվել որպես կարգապահական խախտում:

Միաժամանակ, Փաստաբանը նշել է, որ Սևակ Մելիքյանի պնդումները կառուցված են այն ենթադրության վրա, թե ինքը ՏՎԽ-ին է ներկայացրել «Մինչդատական պահանջագիր» վերտառությամբ փաստաթուղթը, մինչդեռ այդ փաստը հաստատող ապացույց ներկայացված չէ: Ըստ Փաստաբանի՝ թիվ ԵԴ2/11281/02/25 քաղաքացիական գործի շրջանակում ինքը դատարանին արդեն ներկայացրել է ՏՎԽ-ին ուղարկված էլեկտրոնային նամակը, որից, իր պնդմամբ, երևում է, որ ՏՎԽ-ին ներկայացվել են միայն վիճարկվող հոդվածները:

Փաստաբանը նաև նշել է, որ Դիմողի կողմից որպես անձնական տվյալների և նամակագրության գաղտնիության խախտում վկայակոչվող տեղեկությունների զգալի մասը հրապարակված է Դատալեքս տեղեկատվական հարթակում, մասնավորապես՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.03.2026 թվականի որոշման մեջ, որտեղ անդրադարձ է կատարվել նույն պահանջագրին, ԲԿ-ին ներկայացված պահանջներին, ինչպես նաև ԲԿ-ի և բժիշկների վերաբերյալ հրապարակումներին:

Փաստաբանը գտել է, որ այն փաստարկը, թե ինքը ՏՎԽ-ին դիմել է 13.02.2026 թվականին, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը Դատալեքսում հրապարակվել է 12.03.2026 թվականին, էական նշանակություն չունի, քանի որ ՏՎԽ կարծիքը տրամադրվել է 21.04.2026 թվականին, երբ Վերաքննիչ դատարանի որոշումն արդեն հրապարակված էր Դատալեքսում: Ըստ Փաստաբանի՝ ՏՎԽ կարծիքի բովանդակությունից ևս հետևում է, որ ՏՎԽ-ն ծանոթացել և անդրադարձել է Վերաքննիչ դատարանի որոշմանը:

Անդրադառնալով ՏՎԽ անդամ Արա Ղազարյանի հետ իր փոխկապակցվածության վերաբերյալ պնդմանը՝ Փաստաբանը հայտնել է, որ Արա Ղազարյանը «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի հիմնադիրն ու տնօրենն է, իսկ ինքը հանդես է գալիս որպես անհատ ձեռնարկատեր փաստաբան: Ըստ Փաստաբանի՝ նրանք միայն կիսում են նույն գրասենյակային տարածքը և գործընկերներ են, սակայն միմյանցից որևէ կախում կամ կաշկանդվածություն չունեն: Փաստաբանը նշել է, որ իր դիմումը ուղարկել է ՏՎԽ-ի էլեկտրոնային հասցեին, իսկ կարծիքը քննարկվել և ընդունվել է ՏՎԽ ամբողջ կազմի կողմից:

Փաստաբանը նաև հայտնել է, որ Սևակ Մելիքյանի կողմից նույն կամ առնչվող փաստական հանգամանքների կապակցությամբ ներկայացվել են տարբեր դատական հայցեր և դիմումներ, այդ թվում՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի, ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության, ինչպես նաև իր և «Նորք-

Մարաշ» ԲԿ-ի դեմ: Փաստաբանի գնահատմամբ՝ նշված հանգամանքը ևս վկայում է, որ Բողոքաբերի բարձրացրած հարցերը վերաբերում են քաղաքացիաիրավական և անձնական տվյալների պաշտպանության ոլորտում քննվող վեճերին, այլ ոչ թե փաստաբանի կարգապահական խախտման առերևույթ առկայությանը:

5. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննվում է թիվ ԵԴ2/11281/02/25 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «Նորք-Մարաշ» ԲԿ-ի և բժիշկների ընդդեմ «Սոուշըլ Մեդիա» ՍՊԸ-ի՝ զրպարտություն համարվող տեղեկությունները հերքելու և ոչ նյութական վնասի հատուցման պահանջների մասին:

2. Նշված քաղաքացիական գործով «Նորք-Մարաշ» ԲԿ-ի և բժիշկների ներկայացուցիչն է փաստաբան Կարեն Տոնոյանը:

3. Դիմողի կողմից «Նորք-Մարաշ» ԲԿ-ին հասցեագրված պահանջագիրը առնչվել է Դիմողի մոր մահվան դեպքին, ԲԿ-ի և բժիշկների գործողություններին, կատարված բժշկական ծախսերի վերադարձի, թաղման ծախսերի և բարոյական վնասի փոխհատուցման պահանջներին:

4. Փաստաբանի բացատրությամբ՝ Տեղեկատվական վեճերի խորհրդին դիմելը պայմանավորված է եղել թիվ ԵԴ2/11281/02/25 քաղաքացիական գործով վստահորդների շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ և գործին առնչվող հարցերի վերաբերյալ մասնագիտական կարծիք ստանալու նպատակով:

5. Տեղեկատվական վեճերի խորհրդի թիվ 125 կարծիքը հրապարակվել է ոչ թե Փաստաբանի կողմից, այլ համապատասխան հասարակական կազմակերպության և Տեղեկատվական վեճերի խորհրդի կողմից:

6. Դիմումով և բողոքով չի ներկայացվել կոնկրետ փաստական տվյալ այն մասին, թե Փաստաբանը երբ, որտեղ, ինչ եղանակով և ինչ ծավալով է անձամբ հրապարակել Դիմողի պահանջագիրը կամ դրանում առկա տեղեկությունները:

7. Դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Սևակ Մելիքյանի կողմից նույն փաստական հանգամանքների կապակցությամբ քաղաքացիական հայց է ներկայացվել ընդդեմ Կարեն Տոնոյանի և «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության, նամակագրության գաղտնիության, անձնական տվյալների և բժշկական գաղտնիքի պաշտպանության իրավունքների խախտման փաստը ճանաչելու և ոչ նյութական վնասի հատուցում բռնագանձելու պահանջներով:

4. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>**.

Խորհուրդը, ուսումնասիրելով Պալատի նախագահի 05.06.2026 թվականի թիվ 506-Ա որոշումը, Սևակ Մելիքյանի բողոքը, գործում առկա նյութերը, գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետև նաև՝ Օրենք**) 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ բողոքի քննության ժամանակ խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Օրենքի 39.11-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը՝

1) **փաստաբանների պալատի նախագահի որոշումն անփոփոխ թողնելու մասին**,

2) փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու մասին:

«**Փաստաբանության մասին**» **օրենքի** 19-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 2-**րդ կետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Օրենքի 39-**րդ հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 39.3-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին կետի համաձայն՝** կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է, եթե փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են:

Վերոգրյալ իրավակարգավորումներից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել միայն այն դեպքում, երբ ներկայացված նյութերում առկա են փաստական հանգամանքներ, որոնք արտաքուստ, առանց դրանց ըստ էության ամբողջական քննության, ողջամիտ և օբյեկտիվ կասկած են առաջացնում փաստաբանի կողմից «Փաստաբանության մասին» օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ: Միայն դիմողի սուբյեկտիվ գնահատականը, ենթադրությունը կամ փաստաբանի գործողության հետ անհամաձայնությունը չի կարող բավարար հիմք հանդիսանալ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար, եթե այն չի զուգորդվում այնպիսի փաստական տվյալներով, որոնք առերևույթ կարող են վկայել փաստաբանի կողմից մասնագիտական վարքագծի կոնկրետ կանոնի հնարավոր խախտման մասին:

Կարգապահական վարույթի հարուցման փուլում Խորհրդի գնահատման առարկան ոչ թե Բողոքաբերի կողմից վկայակոչվող քաղաքացիաիրավական, վարչաիրավական կամ ոլորտային յուրաքանչյուր ենթադրյալ իրավախախտման ըստ էության առկայությունն է, այլ այն, թե արդյոք այդ փաստական հանգամանքներից առերևույթ բխում է փաստաբանի՝

«Փաստաբանության մասին» օրենքով կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված հատուկ պարտականության հնարավոր խախտում:

Սույն գործով Խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերի կողմից ներկայացված փաստարկները չեն հաղթահարում կարգապահական վարույթ հարուցելու համար անհրաժեշտ առերևույթ շեմը:

Նախ՝ Խորհուրդը համաձայն է Պալատի նախագահի այն եզրահանգմանը, որ Բողոքաբերի բարձրացրած հիմնական հարցը վերաբերում է անձնական տվյալների, բժշկական գաղտնիքի, նամակագրության գաղտնիության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության ենթադրյալ խախտման իրավաչափության գնահատմանը:

Այդպիսի հարցերը, որպես ընդհանուր կանոն, կարգավորվում են համապատասխան ոլորտային օրենսդրությամբ և կարող են քննության առարկա դառնալ այդ նպատակով նախատեսված իրավական ընթացակարգերով՝ իրավասու մարմնի կամ դատարանի կողմից: Դրանք ինքնին չեն նույնանում փաստաբանի կարգապահական պատասխանատվության հիմքի հետ: Այլ մոտեցման դեպքում կստացվեր, որ փաստաբանի վերաբերյալ ցանկացած քաղաքացիաիրավական, վարչաիրավական կամ այլ ոլորտային վեճ ինքնաբերաբար պետք է դառնա նաև փաստաբանի վարքագծի կանոնների խախտման քննարկման առարկա: Նման մոտեցումը չի բխում «Փաստաբանության մասին» օրենքի 39-րդ և 39.3-րդ հոդվածների բովանդակությունից և անհարկի կընդլայներ Պալատի կարգապահական իրավասության շրջանակը:

Խորհուրդը կարևորում է նաև այն հանգամանքը, որ Բողոքաբերը նույն փաստական հանգամանքների կապակցությամբ արդեն դիմել է քաղաքացիական դատարան՝ պահանջելով ճանաչել իր մասնավոր կյանքի անձեռնմխելիության, նամակագրության գաղտնիության, անձնական տվյալների և բժշկական գաղտնիքի պաշտպանության իրավունքների խախտման փաստը, ինչպես նաև բռնագանձել ոչ նյութական վնասի հատուցում:

Քաղաքացիական գործի առկայությունը, ինքնին, չի բացառում նույն փաստական հանգամանքների կապակցությամբ փաստաբանի վարքագծի գնահատումը կարգապահական վարույթի շրջանակում, եթե առկա լինեն փաստաբանական գործունեության հատուկ կանոնի հնարավոր խախտման առերևույթ տվյալներ: Սակայն քաղաքացիական վեճի առկայությունը չի կարող փոխարինել այդպիսի տվյալներին և չի կարող ինքնին դիտվել որպես կարգապահական վարույթ հարուցելու հիմք:

Խորհրդի գնահատման առարկան սույն փուլում ոչ թե Բողոքաբերի մասնավոր կյանքի, անձնական տվյալների, բժշկական կամ նամակագրության գաղտնիության խախտման առկայության և դրա իրավաչափության քաղաքացիաիրավական գնահատումն է, այլ այն, թե արդյոք բողոքով և գործում առկա նյութերով առերևույթ բացահայտվում է փաստաբանի կողմից «Փաստաբանության մասին» օրենքի կամ Փաստաբանի վարքագծի

կանոնագրքի կոնկրետ պահանջի հնարավոր խախտում:

Տվյալ դեպքում նման առերևույթ տվյալներ բողոքով չեն ներկայացվել:

Հաջորդիվ՝ Խորհուրդը համաձայն է Պալատի նախագահի այն գնահատականին, որ պետք է տարբերակել տեղեկության հրապարակումը և գործին առնչվող նյութի տրամադրումը մասնագիտական կարծիք ստանալու նպատակով:

Բողոքաբերը պնդում է, որ իր անձնական տվյալները և գաղտնի տեղեկությունները հրապարակվել են: Մինչդեռ բողոքով և գործում առկա նյութերով բավարար որոշակիությամբ չի բացահայտվում, թե Փաստաբանը երբ, որտեղ, ինչ եղանակով և ինչ ծավալով է անձամբ հրապարակել Բողոքաբերի պահանջագիրը կամ դրանում առկա տեղեկությունները:

Գործում առկա նյութերով երևում է, որ հրապարակվել է Տեղեկատվական վեճերի խորհրդի թիվ 125 կարծիքը: Այդ կարծիքը հրապարակվել է ոչ թե Փաստաբանի, այլ համապատասխան հասարակական կազմակերպության և Տեղեկատվական վեճերի խորհրդի կողմից: Հետևաբար, միայն այն հանգամանքը, որ Բողոքաբերը ՏՎԽ հրապարակված կարծիքից տեղեկացել է իր պահանջագրի օգտագործման մասին, բավարար չէ եզրակացնելու, որ տվյալների հրապարակումը կատարվել է հենց Փաստաբանի կողմից:

Տվյալների հրապարակումը ենթադրում է դրանց հանրայնացում կամ հասանելի դարձնել անորոշ կամ լայն շրջանակի անձանց: Մինչդեռ սույն նյութերով Փաստաբանին վերագրվող գործողությունը, ըստ էության, վերաբերում է ոչ թե տվյալների հրապարակմանը, այլ Տեղեկատվական վեճերի խորհրդին դիմելուն և մասնագիտական կարծիք ստանալու նպատակով որոշակի նյութերի տրամադրմանը: Այս պայմաններում բողոքում ներկայացված փաստարկները չեն հերքում Պալատի նախագահի այն եզրահանգումը, որ Փաստաբանի կողմից տվյալների հրապարակման փաստը բավարար որոշակիությամբ չի բացահայտվել:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ Բողոքաբերի փաստարկին՝ Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ Պալատի նախագահի որոշմամբ Տեղեկատվական վեճերի խորհրդի թիվ 125 կարծիքը չի նույնացվել դատարանի որոշմամբ նշանակված փորձաքննության արդյունքում կազմված փորձագետի եզրակացության հետ, ինչպես նաև Տեղեկատվական վեճերի խորհրդին չի վերագրվել տվյալ քաղաքացիական գործով դատավարական փորձագետի կամ մասնագետի կարգավիճակ:

Պալատի նախագահի որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածին հղում կատարելու նպատակը եղել է ոչ թե Տեղեկատվական վեճերի խորհրդի կարծիքին նախապես ապացույցի որոշակի կարգավիճակ կամ ապացուցողական ուժ վերագրելը, այլ այն արձանագրելը, որ քաղաքացիական

դատավարության շրջանակում գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը կարող է գործին առնչվող հարցերի վերաբերյալ ստանալ մասնագիտական կարծիք կամ եզրակացություն և այն ներկայացնել դատարանին: Այլ կերպ՝ Պալատի նախագահի որոշմամբ նշված իրավակարգավորումը վկայակոչվել է Փաստաբանի՝ վստահորդի շահերի պաշտպանության շրջանակում գործին առնչվող հարցերի վերաբերյալ մասնագիտական կարծիք ստանալու իրավաչափ նպատակը հիմնավորելու համար, այլ ոչ թե Տեղեկատվական վեճերի խորհրդին դատավարական փորձագետի կարգավիճակ վերագրելու նպատակով:

Հաջորդիվ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 18-րդ հոդվածով փաստաբանին վերապահված է օրենքով չարգելված եղանակով ձեռք բերելու, ամրագրելու և ներկայացնելու վստահորդի շահերից բխող ապացույցներ և տեղեկություններ, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով մասնագետներ ներգրավելու իրավունք՝ իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված այլ մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցեր պարզաբանելու համար:

Նշված իրավունքը չի կարող մեկնաբանվել ձևականորեն այնպես, որ փաստաբանը դատարանում վստահորդի շահերը պաշտպանելիս իրավունք ունենա հղում անել միայն այն նյութերին, որոնք արդեն իսկ առկա են դատարանի վարույթում, բայց զրկված լինի վստահորդի դիրքորոշումը հիմնավորելու համար նախապես մասնագիտական կարծիք ստանալու կամ մասնագիտական գնահատում հայցելու հնարավորությունից:

Վստահորդի արդյունավետ պաշտպանությունը ներառում է նաև դատավարական դիրքորոշման նախապատրաստումը, ապացույցների հավաքագրումը, գործին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրությունը և դրանց վերաբերյալ մասնագիտական կարծիքների ստացումը: Այդ գործողությունները փաստաբանական գործունեության բնական և անհրաժեշտ բաղադրիչ են, եթե կատարվում են վստահորդի շահերի պաշտպանության նպատակով և օրենքով չարգելված եղանակով:

Տվյալ դեպքում Բողոքաբերի պահանջագիրը հասցեագրվել է հենց Փաստաբանի վստահորդին՝ «Նորք-Մարաշ» ԲԿ-ին, և պարունակել է պահանջներ վերջինիս և նրա բժիշկների նկատմամբ: Հետագայում այդ պահանջագրին, դրան հաջորդած հրապարակումներին և դրանց բովանդակությանը առնչվող հարցերը դարձել են այն տեղեկատվական վեճի փաստական հիմքը, որի շրջանակում Փաստաբանը ներկայացրել է իր վստահորդների շահերը: Հետևաբար, Բողոքաբերի պահանջագիրը կամ դրան առնչվող տեղեկությունները չէին կարող համարվել տվյալ քաղաքացիական վեճի հետ ակնհայտորեն կապ չունեցող նյութեր: Դրանք վերաբերում էին հենց այն փաստական նախապատմությանը, որի շրջանակում ձևավորվել էր Փաստաբանի վստահորդների դատական պաշտպանության անհրաժեշտությունը:

Այս պայմաններում Տեղեկատվական վեճերի խորհրդին՝ որպես տեղեկատվական

վեճերի, զրպարտության, վիրավորանքի, մասնավոր կյանքի պաշտպանության և տեղեկատվության ազատության հարցերով խորհրդատվական բնույթի մասնագիտական կարծիքներ տրամադրող կառույցի, դիմելը ինքնին չի կարող դիտվել որպես փաստաբանի մասնագիտական վարքագծի խախտման առերևույթ հատկանիշ:

Հաջորդիվ՝ Խորհուրդն ընդունելի չի համարում Բողոքաբերի այն փաստարկը, որ ՏՎԽ անդամներից Արա Ղազարյանի և Փաստաբանի՝ նույն փաստաբանական գրասենյակում աշխատելու հանգամանքը ինքնին վկայում է տվյալների ապօրինի փոխանցման, արհեստական կարծիք ձևավորելու կամ կարգապահական խախտման մասին: Այդ պնդումը, իր բնույթով, ենթադրություն է և չի հիմնավորվում այնպիսի փաստական տվյալներով, որոնք առերևույթ կվկայեին, որ Փաստաբանը գործել է վստահորդի շահերի պաշտպանության սահմաններից դուրս, տվյալները փոխանցել է անձնական նպատակով կամ օգտագործել է դրանք մասնագիտական նպատակից դուրս: Նույն փաստաբանական գրասենյակում աշխատելու մասին պնդումը, եթե Բողոքաբերը գտնում է, որ այն կարող է ազդել ՏՎԽ կարծիքի անկողմնակալության, արժանահավատության կամ ապացուցողական նշանակության վրա, կարող է ներկայացվել և գնահատվել քաղաքացիական գործի շրջանակում՝ որպես համապատասխան կարծիքի ապացուցողական արժեքին վերաբերող փաստարկ: Սակայն այդ հանգամանքը ինքնին չի հանդիսանում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու բավարար հիմք:

Հաջորդիվ՝ Խորհուրդը գնահատում է նաև Բողոքաբերի ժամանակագրական փաստարկը, ըստ որի Փաստաբանը Տեղեկատվական վեճերի խորհրդին դիմել է մինչև վերաքննիչ դատարանի դատական ակտի հրապարակումը:

Նշված փաստարկը ևս չի հերքում Պալատի նախագահի որոշման իրավաչափությունը: Փաստաբանի կողմից վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված նախապատրաստական գործողությունները, այդ թվում՝ մասնագիտական կարծիք ստանալու համար դիմելը, պարտադիր չէ, որ կատարվեն միայն դատարանի կողմից ապացուցման բեռը վերջնականապես ձևակերպելուց կամ դատական ակտը հրապարակելուց հետո: Դատավարական դիրքորոշման ձևավորումը, ապացուցողական նյութերի հավաքագրումը և մասնագիտական գնահատումների ստացումը կարող են իրականացվել նաև մինչ համապատասխան դատավարական փուլը, եթե դրանք առնչվում են առկա կամ ակնկալվող դատական վեճին և վստահորդի շահերի պաշտպանությանը:

Տվյալ դեպքում Փաստաբանի կողմից Տեղեկատվական վեճերի խորհրդին դիմելու կապը քաղաքացիական վեճի հետ հիմնավորվում է այն հանգամանքով, որ Փաստաբանը նույն գործով ներկայացրել է «Նորք-Մարաշ» ԲԿ-ի և բժիշկների շահերը, իսկ ՏՎԽ-ին ներկայացված նյութերը վերաբերվել են այն պահանջագրին և հետագա հրապարակումներին, որոնք առնչվել են այդ վեճի փաստական հիմքերին: Հետևաբար,

միայն այն փաստը, որ ՏՎԽ-ին դիմելը ժամանակագրորեն նախորդել է որևէ դատական ակտի հրապարակմանը, չի կարող առերևույթ վկայել, որ Փաստաբանը գործել է վստահորդի շահերի պաշտպանության թույլատրելի սահմաններից դուրս կամ կատարել է կարգապահական խախտում:

Հաջորդիվ՝ Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ նաև Բողոքաբերի այն դիրքորոշմանը, որ անձնական տվյալների կամ գաղտնի տեղեկությունների փոխանցումը չի կարող արդարացվել փաստաբանի դատավարական գործառույթով:

Խորհուրդը արձանագրում է, որ փաստաբանի դատավարական գործառույթը, բնականաբար, չի կարող արդարացնել օրենքով արգելված գործողությունները կամ փաստաբանի կողմից մասնագիտական պարտականությունների խախտումը: Սակայն սույն գործով հարցն այն չէ, թե արդյոք փաստաբանը տեսականորեն կարող է պատասխանատվության ենթարկվել անձնական տվյալների կամ գաղտնի տեղեկությունների ապօրինի օգտագործման համար: Հարցն այն է, թե արդյոք Բողոքաբերի ներկայացրած նյութերով առերևույթ բացահայտվել է հենց այդպիսի կարգապահական խախտման փաստական հիմք:

Սույն դեպքում Բողոքաբերը չի ներկայացրել բավարար որոշակի փաստական տվյալ այն մասին, որ Փաստաբանը Բողոքաբերի պահանջագիրը կամ դրանում առկա տեղեկությունները հրապարակել է, տարածել է հանրային հասանելիությամբ, օգտագործել է վստահորդի շահերի պաշտպանության նպատակից դուրս կամ փոխանցել է այնպիսի անձանց, որոնց ներգրավումը որևէ կերպ առնչություն չի ունեցել գործով մասնագիտական կարծիք ստանալու կամ վստահորդների դատական պաշտպանության հետ: Բացի այդ, բողոքով չի հիմնավորվում, որ ՏՎԽ-ին ենթադրաբար տրամադրված տեղեկությունները նախկինում որևէ կերպ չեն եղել հանրային վեճի, դատական գործընթացի, հրապարակային հաղորդակցության կամ կողմերի միջև ծագած տեղեկատվական վեճի առարկա:

Այս պայմաններում միայն Բողոքաբերի պնդումը, որ իր անձնական տվյալները կամ բժշկական գաղտնիք պարունակող տեղեկությունները փոխանցվել են առանց իր համաձայնության, բավարար չէ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար, եթե նույն փաստերից առերևույթ չի բխում «Փաստաբանության մասին» օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կոնկրետ պահանջի հնարավոր խախտում:

Խորհուրդը նաև արձանագրում է, որ կարգապահական վարույթ հարուցելու փուլում գնահատման ենթակա են դիմումով և բողոքով ներկայացված փաստական տվյալները, այլ ոչ թե ընդհանուր բնույթի պնդումների հիման վրա ենթադրյալ կարգապահական խախտման հնարավոր բոլոր վարկածները: Վարույթ հարուցելու համար անհրաժեշտ է, որ դիմումը կամ բողոքը պարունակի այնպիսի որոշակի փաստական տվյալներ, որոնք

առերևույթ կարող են վկայել փաստաբանի կողմից «Փաստաբանության մասին» օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կոնկրետ պահանջի հնարավոր խախտման մասին:

Տվյալ դեպքում Բողոքաբերի բողոքը հիմնականում ուղղված է Պալատի նախագահի որոշման իրավական գնահատականների հետ անհամաձայնությանը և նույն փաստական հանգամանքների քաղաքացիաիրավական ու անձնական տվյալների պաշտպանության ոլորտի գնահատմանը: Սակայն բողոքը չի ներկայացնում այնպիսի նոր կամ բավարար փաստական տվյալ, որը կարող էր կասկածի տակ դնել Պալատի նախագահի եզրահանգումը՝ Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի առերևույթ բացակայության վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի 05.06.2026 թվականի թիվ 506-Ա որոշումը հիմնավորված է և իրավաչափ, ուստի այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-**ին մասի**, 39.11-**րդ հոդվածի** 3-**րդ մասի և** 9-**րդ մասի** 1-**ին կետի պահանջներով**,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 05.06.2026 թվականի «Փաստաբան Կարեն Արայի Տոնոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 506-Ա որոշման դեմ Սևակ Մելիքյանի կողմից 18.06.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:
2. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 05.06.2026 թվականի թիվ 506-Ա որոշումը թողնել անփոփոխ:
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Դավիթ Վարդիկյան**

17 հուլիսի 2026թ.
թիվ ԿԳ/19-Ա
ք. Երևան